ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1963 Общественные науки

Կ. Վ. Սեդրբոյան

ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1961—1962 թթ. իմ դաշտային աշխատանքի ընթացքում հարուստ ու բազմազան նյութեր են հավաքվել Լենինական քաղաքի բնակչության կենցաղի ու կուլտուրայի վերաբերյալ։ Դրանցից առավել ուշագրավները ժամանակակից հարսանեկան ցիկլը ներկայացնող նյութերն են։ Տվյալ հաղորդման հիմքում ընկած է 1961 թ. քաղաքում կատարված ամենաբնորոշ հարսանիքներից մեկի հանգամանալից նկարագրությունը, ինչպես նաև լրացուցիչ այլ նյութեր։ Սրանով մի փորձ է արվում տալու Լենինականի ժամանակակից հարսանեկան ցիկլը։

Լենինականցիների նախնիները շուրջ մի հարյուրամյակ է, ինչ հիմնադրվել են հին Գյումրիում։ Նրանք եկել են Հայաստանի տարբեր վայրերից՝ Կարինից, Բայազետից, Ղարսից և արհեստավորական այլ կենտրոններից ու գյուղական շրջաններից՝ իրենց հետ բերելով դարերի ընթացքում կենցաղում արմատավորված ծեսեր ու սովորույթներ։ Քաղաքային կյանքի պայմաններում այդ սովորույթները, ժամանակի ընթացքում, որոշ չափով փոփոխվում, միաձուլվում, ընդհանրանում ու արմատավորվում են կենցաղում։ Մեծ մասամբ արդյունք լինելով համքարական սովորույթների, որոնք առհասարակ հայտնի են իրենց պահպանողականությամբ, դրանք այժմ՝ սոցիալիստական շինարարության պայմաններում, վերափոխված ձևով հանդես են գալիս լենինականցիների կենցաղում, մասնավորապես հարսանեկան սովորույթներում։

Արդի ամուսնությունների հիմքում, իբրև կանոն, ընկած է զույգերի փոխադարձ սերը, հարգանքն ու համաձայնությունը։ Տնտեսական շահագրգռվածությունը գրեթե դադարել է ամուսնության հիմք ծառայելուց։ Սակայն դեռևս պատահում են ստիպողական, առանց սիրո ամուսնություններ։ Բայց, նույնիսկ, նման ամուսնությունները կատարվում են ոչ թե բացառապես ծնողների ընտրությամբ, կուրորեն, ինչպես լինում էր անցյալում, այլ ամուսնացող կողմերի վճռական խոսքով, նրանց համաձայնությամբ, միայն մեծ մասամբ, ամուսնացողների միմյանց ճանաչելուց հետո։ Նման դեպքերում է, որ հնից եկող հարսանեկան ծեսերն ավելի ցայտուն են հանդես գալիս, ըստ որում, դրանց կատարման ընթացքում էլ ինչպես կողմերի հարազատները, այնպես էլ երիտասարդները ժամանակ շահելով, հնարավորություն են ստանում միմյանց լավ ճանաչելու և խուսափելու պատահականություններից։

Փոխադարձ սիրո և հարգանքի վրա հիմնված ամուսնություններում ևս որոշ չափով պահպանվել են հին ծեսեր ու սովորույթներ, բայց դրանք էական դեր չեն խաղում։

Սովորաբար ամուսնանում են՝ աղջիկները 18—23, տղաները՝ 25—28 տարեկան հասակում։ Տարիքային տարբերությունը ամուսնացողների միջև մեծ մասամբ՝ ոչ զգալի, իսկ փոխադարձ ճանաչումն ու ընտրությունը կատարվում է համատեղ ուսման, աշխատանքի կամ հարևանության ընթացքում։

Լինինականում երիտասարդները, դեռ մինչև օրս, անհարմար են զգում ամուսնանալու մասին իրենց մտադրությունը ծնողներին անձամբ հայտնել ու սովորաբար դիմում են ընկերների կամ մերձավոր հարազատների օգնությանը։ «Խոսք բաց անելու» միջոցով իրենց տղայի մտադրությունը իմանալուց հետո, ծնողները սկսում են հետաքրքրվել աղջկա և նրա ծնողների ով լինելով «աշխել տակն ու վերևն», և պատրաստվում են պատգամ կամ խնամի գնալ, աղջկան տեսնելու։ Սակայն, քանի դեռ չգիտեն, թե ինչ դիրք կբռնեն աղջկա ծնողները, տղայի բարեկամները մոտիկ մարդկանց միջոցով իրենց մտադրության մասին տեղեկացնում են աղջկա մորը՝ «ձենն անկաջն են գցում»[1]։

Իմանալով երիտասարդների մտադրությունը՝ աղջկա ծնողները սկզբում ցուցաբերում են դժգոհություն, սակայն, սկսում են իրենք էլ հետաքրքրվել երիտասարդի անձնավորությամբ ու ընտանիքով և եթե հիմնականում նպաստավոր կարծիք են կազմում, որոշում են չխանգարել իրենց դստեր «բախտը»։

Նախօրոք աղջկանից առնելով խնամիների պատգամ գալու լուրը՝ աղջկա մայրը պատրաստվում է հյուրերին ընդունելու, դրա հետ մեկտեղ ջանալով ցույց չտալ, թե սպասում է նրանց։ Նա իր մոտ է հրավիրում իր ազգականներից մի երկուսին, ինչպես և տղայի ծնողներին լավ ծանոթ մի որևէ բարեկամի։ Պատգամներն էլ իրենց հետ բերում են այն բարեկամին, որը ճանաչում է աղջկա ընտանիքը։ Սովորաբար պատգամ են գնում կանայք՝ տղայի մայրը, նրա ազգականներից մեկը և որևէ բարեկամ։ Սա է պատճառը, որ աղջկա հայրը պատգամի օրը աշխատում է բացակայել տնից, իհարկե, իր մտադրությունը կնոջը հայտնելուց հետո։

Մտնելով աղջկա տունը, պատգամները, սովորաբար, դիմում են ներկաներին հետևյալ խոսքերով. «Մենք մի տեղմ էնք էկել, հըմը, չիդենք ճիշտ էնք էկել, թե չէ»։ Սովորաբար պատասխանը լինում է՝ «Մենք չիդենք դուք ուր էր էկել ու ընչի համար, օր ասենք ճիշտ էր էկել, թե չէ»։ Այստեղ ընդհանրապես խոսքի մեջ են մտնում աղջկա ընտանիքին ծանոթ կանայք և ասում՝ «Հա, շատ ճիշտ էլ էկել էնք, հենց էս տունն էր, որ մենք պրտի գայինք, Սաթենիկ ջան», և այլն։

Լավ իմանալով միմյանց մտադրությունը, կողմերը չեն շտապում հիմնական խոսակցության անցնել և զրուցում են զանազան, հաճախ բուն խնդրի հետ կապ չունեցող բաների մասին։ Տղայի բարեկամները չեն թաքվում միամամանակ դիտել նաև բոլորտիքը (ընակարանի մարբությունը, կահավորումը և այլն)։ Տղայի մայրն աշխատում է սկսել հիմնական խոսակցությունը, իսկ աղջկա մայրը՝ շտապողականություն չցուցաբերելու նկատառումով, խուսափում է դրանից։ Վերջապես տղայի մայրը սկսում է խոսակցությունը։

— Սաթենիկ ջան, մենք էկել էնք ըստեղ գործով։ Էկել էնք ըստեղ աղջիկ տեսնելու մեր տղի համար։

Աղջկա մայրը պատասխանում է հարցով, թե մի՞թե նրանք չեն տեսել իր աղջկան, դրանով հասկացնելով, որ նրանց մտադրությունն իրեն հայտնի է և

[1] Համբարական սովորության համաձայն, նախկին Այնրսանդրապոլում համբարության որևէ անդամի ամուսնությունը դիտվում էր որպես ընդհանուր համբարական երևույթ։ Ցուրաքանչյուր համբարություն շահագրգռված էր բարձր պահելու իր պատիվը՝ իր անդամին կնության վերցնել բարոյապես առարինի, լավ ընտանիքից դուրս եկած աղջկա և, ընդհակառակն, աղջիկ էր տրվում լավ բարք ունեցող տղամարդու։ Այս երևույթը ավանդաբար անցել է լենինականցիների այժմյան կենցաղի մեջ։

անտեղյակ ձևանալը ավելորդ։ Սակայն պատգամներն իրենց հեղինակությունը չզցելու համար շարունակում են ձևականությունները։ Այստեղ արդեն, ընդհանրապես, օգնության են գալիս աղջկա կողմի «պատահական» հյուրերը, որոնք մինչ այդ «անտեղյակ» մարդու նման լուռ են մնացել և զանազան կատակներով ու հաշտեցնող խոսքերով հարմար դրություն են ստեղծում հիմնական խոսակցությանն անցնելու համար։

Այն բանից հետո, երբ կողմերը ընդհանուր համաձայնության են գալիս, պայմանավորվում են հետագա հանդիպումների ու կարգի մասին։ Հնում հարսանեկան ցիկլի մեջ Լին մտնում բազմաթիվ ծեսեր[2]։ Այժմ բոլոր այդ ծեսերը չեն կատարվում։ Հիմնականում պահպանվել են՝ աղջիկտեսը կամ պատգամը, բեհը (գրավ), նշանդրեքը, հարսանիքը և հարսանիքից հետո առաջին շաբաթվա վերջում աղջկա մոր հրավիրումը փեսայի տուն։ Սակայն այս ծեսերն էլ մեծ մասամբ երբեմն միացվում են. այսպես՝ աղջիկտեսը բեհին, ապա նշանդրեք և հարսանիք։ Կամ՝ աղջիկտես, բեհ, այնուհետև նշանդրեք ու հարսանիք միասին, իսկ ավելի շատ՝ աղջիկտես—նշանդրեք (միասին) և հարսանիք։ Հարսանեկան տոնախմբությունները հիմնականում արվում են աշնանն ու ձմռանը[3]։

Մինչև նշանադրության օրը, խնամիները մի քանի անգամ այցելում են աղջկան, իսկ տղայի քույրը կամ մերձավոր երիտասարդ ազգականուհին գալիս է ավելի հաճախ, աղջկա հետ միասին գնում է կինո, թատրոն և նույնիսկ բաղնիք։

Հնում ալեքսանդրապոլցիները սովորություն են ունեցել աղջկան մինչև նշանադրությունը տղայի կին հարազատների ուղեկցությամբ տանելու բաղնիք՝ նրա մարմնական բարեմասնություններն ու արատները ստուգելու համար։ Այժմ այդ սովորությունը հիմնովին վերացել է և ստացել հարսնացուին ուղեկցելու իմաստ։ Այս բոլորով պայմաններ են ստեղծվում աղջկան ավելի մոտիկից ճանաչելու, իսկ աղջիկը, իմանալով այդ, իրեն պահում է ավելի զուսպ ու հա-

---

2 Հին դյումրեցիների (ալեքսանդրապոլցիների) մոտ կային հետևյալ ծեսերը՝ աղջիկտես, խնամխոս, նշանդրեք, քյսա-բիչա, պսակի պատրաստություն, փեսատես, հարսնտես, պսակադրություն, հարսանիք, շարսավ դուրս տալ, գլուխլվանեք և այլն։ Ծեսերի բազմազանությունը բացատրվում է Դյումրիի բնակչության կազմի բազմազանությամբ, որոնք տարբեր վայրերից գալով և առժամանակ կենցաղում հակամարտ լինելով միմյանց, յուրաքանչյուրը պահպանում էր իր ծեսը։ Ժամանակի ընթացքում հակամարտությունը նվազեց, սկսեցին բարեկամական կապեր ստեղծվել միմյանց միջև, իրար հարգելով կատարել երբեմն իրար նման և կրկնող ծեսեր, որոնք ժամանակի ընթացքում միաձուլվեցին, կրճատվեցին։ Ավելի ուշ, արհեստավորական նոր դաղարի պայմաններում, հարսանեկան ծեսերից դուրս մղվեցին այնպիսի արարողություններ, ինչպես, օրինակ՝ «թարվորի» շորերի օրհնելը, դրանց աճուրդի հանելը, փեսատեսի ժամանակ տղային բաղնիք տանելը, եկեղեցական որոշ արարողություններ, հարսին հինա ուղարկելը, սուշու տալը և այլն։ Սակայն տարբեր ժամանակ, զանազան ընտանիքներում, ոչ իր հին նշանակությամբ, սովորության ուժով երբեմն ձևականորեն կատարվել են այս կամ այն ծեսը կամ ավելացրել են ժամանակի պահանջից բխող գուցե և ուրիշ տեղերից ընդօրինակած ծեսեր։ Նշենք նաև, որ հարսանեկան ցիկլի զանազան պահերը նույն իմաստն ունենալով, կոչվել են տարբեր անուններով։

3 Հայտնի է, որ հարսանիքները սովորաբար կատարվում են աշնանն ու ձմռանը, երբ գյուղացին ավարտած է լինում դաշտային աշխատանքներն ու բերքահավաքը։ Քաղաքային պայմաններում, մասնավորապես Լենինականում, նկատի է առնվում այդ ամիսներին մթերքների, հատկապես մրգերի առատությունը, ինչպես նաև ժամանակի հարմարավետությունը (ամառանոցային-արձակուրդային շրջանի ավարտումը և տուն հավաքվելը)։

վաք։ Աղջկա ծնողներն իրենց հերթին, ապագա փեսային մոտիկից ճանաչելու համար, նրան հրավիրում են իրենց տուն։

Հարսանեկան ցիկլի բոլոր տոնախմբություններին, լինի գա նշանգրեք թե հարսանիք, լենինականցիները պատրաստվում են մեծ պատասխանատվությամբ ու հանդիսավորությամբ։ Նախօրոք որոշվում է, թե որտեղ պետք է հանգրստանան և ինչով պետք է զբաղվեն այլ քաղաքներից եկած հյուրերը, որը նոր երևույթ է։ Նախապատրաստվում է սեղանը։ Լենինականցիների համար շատ կարևոր է սեղանի առատությունը։ Սովորաբար ընդունված՝ կոնյակի, գինու, օղու, գարեջրի, քաղցրավենիքի և թխվածքների հետ մեկտեղ, սեղանին անպայման առատորեն պետք է լինեն՝ տեղական գաթան, խաշլաման, տապակած լորին, փլավը, տոլման, քարե քյուֆթան և այլն։

Ի տարբերություն հնի, սեղանը պատրաստվում է նախքան հյուրերի գալը՝ միանգամից, բացառությամբ տաք կերակուրների։ Սա ավելի ճոխ և գեղեցիկ է ցույց տալիս սեղանը։ Սակայն, եթե բեհը և նշանադրությունը միասին են կատարվելու, սեղանը գցվում է առանձին սենյակում, ուր տղայի հյուրերը կարող են մտնել միայն բեհի հանձնման ծիսակատարությունը հաջողությամբ ավարտելուց հետո։

Բեհը հանձնելիս սովորաբար հարսնացուի տուն են գալիս փեսացուի հայրը, մայրը, քավորը, քավորկինը և մի քանի հարազատներ։ Այս դեպքում արդեն գերակշռում են տղամարդիկ։ Նրանց սպասում են հարսնացուի հայրը, մայրը, քեռին, հորեղբայրը, պապը և այլ բարեկամներ։

Բանակցությունը առաջինը սկսում է քավորը և, գրեթե, առանց ձևականությունների, կողմերի տղամարդիկ գալիս են ընդհանուր համաձայնության։ Քիչ է պատահում, որ համաձայնություն չգան։ Դա լինում է մեծ մասամբ այն դեպքում, երբ տղայի կամ աղջկա հարազատների մեջ տարաձայնություն կա, երբ ամուսնությունը փոխադարձ սիրո վրա չէ հիմնված և այլն։ Կողմերի ընդհանուր համաձայնությունից հետո, քավորկինը գնում և առաջ է բերում հարսնացուին, տղայի մայրը աղջկա մատն է անցկացնում ադամանդե ակով կամ որևէ այլ մատանի, հյուրերը մեջտեղ են բերում մինչ այդ ծածուկ պահած կոնյակը և քաղցրավենիքը, քավորը լցնում է ըմպանակները և միմյանց «աչքերդ լուս» ասելով, խմում են մինչև վերջին ումպը։ Հրավիրվում է նվագախումբ՝ կլարնետ, դուդուկ, դհոլ, կանչում են փեսացուին և, եթե բեհի հանձնումը նշանադրության հետ միասին չէ, սեղան է դցվում և ուրախությունն սկսվում է։ Իսկ եթե միասին են, ապա բեհի հանձնումից հետո հրավիրում են հարսնևորները, և սկսվում է նշանադրությունը։

Նշանադրության ժամանակ հրավիրվող հյուրերին դիմավորում են մուտքի մոտ և սկսում են «սինի խաղացնել»՝ սկուտեղը բռնում են գլխներից վեր և մեկ հարսի, մեկ փեսայի կողմնակիցները, մեկը մյուսից վերցնելով այն՝ պարում են։ Այնուհետև հյուրերը հրավիրվում են սեղան նստելու, աղջկա հայրը կամ քեռին «բարի գալուստ» է մաղթում նրանց և առաջադրում վաղօրոք նախատեսված թամադայի թեկնածությունը։

Թամադա լինելը լենինականցիների մոտ մեծ պատիվ է։ Պատահական մարդու թամադա չեն ընտրում։ Նա մեծ լիազորություններ ունի։ Նրան դիտողություններ կարող է անել միայն քավորը, որն ընդհանրապես քիչ է օգտվում կը իրավունքից, որովհետև թամադաները շատ լավ գիտեն «օրենքները» և մեծ ճշտությամբ ու զգուշությամբ են կատարում իրենց պարտականությունները։

Թամադայի վարպետությունից է կախված նաև լիակատար ուրախության կազմակերպումն ու նվագախմբի վարձատրությունը, որը կատարվում է միայն «շարաշով»։

Թամադան իրեն օգնականներ է նշանակում և ի տարբերության անցյալի, ցանկություն է հայտնում փեսային և հարսին միասին տեսնել սեղանի շուրջը, պատվավոր տեղում։ Քավորը, քավորկինը, փեսայի հայրը, փեսան՝ նվագակցության ներքո, գնում են հարևան սենյակն ու նվագածուներին «շաբաշ» տալով բերում են հարսին։

Երբ արդեն նորից բոլորը նստում են սեղանի շուրջը, փեսայի հարազատներից մեկը սկսում է ցուցադրել իրենց բերած՝ սինիի մեջ դրված նվերները։ Այդ արվում է կատակով և հիմնականում ցույց տալու համար, թե որ առարկան ով կարող է նվիրած լինել[4]։ Դա կատարվում է այսպես՝ սինիի վրայից վերցնում են որևէ առարկա և բացականչում «ոսկի ժամացույց՝ բերած Թիֆլիսից, շալ դեյրացու՝ բերած Մոսկվայից, կալցո մատնիք՝ Երևանից, շալ կտոր՝ Լենինականում առած, գարնիտուր՝ Լենինականում արտադրված, արտասահման գնացած, ընդից ետ եկած ու Մոսկվայում առած, զուլգրմ շուլքի՝ գերմանական, դուխու պրիբոր, կոնյակ-մոնյակ, կանֆետ-մանֆետ և այլն»։

Այնուհետև Թամադան առաջարկում է խմել զույգ ծաղիկների կենացը՝ հոտնկայս, նվագախումբը «տուշ» է նվագում, շատերը բաժակաճառեր են արտասանում։ Սկսվում է ընդհանուր ուրախությունը։ Լենինականցիների սովորության համաձայն, պարել կամ երգել ցանկացողը նվագ է պատվիրում և դրա համար դրամ է դնում կամ գցում երաժիշտների առաջ։ Կանայք սովորաբար «շաբաշ» չեն տալիս, նրանց փոխարեն տալիս են հարազատները, բարեկամները՝ տղամարդիկ, ինչպես նաև այլ տղամարդիկ, որոնք հարգում, կամ իրենց ընդգծված վերաբերմունքն են ուզում ցույց տալ այդ կնոջը կամ նրա ընտանիքին։ Երբ նվագախումբը Թամադայի կարգադրությամբ «տուշ» է նվագում այս կամ այն անձնավորության պատվին, ապա նրա նեատմամբ իրենց հատուկ հարգանքը նշել ցանկացողները «շաբաշ» են գցում և կրկնել են տալիս «տուշը»։ Երբեմն «տուշը» կրկնվում է մոտ տասն անգամ։

Հիմնականում շաբաշ տալիս են 1—3 ռուբ ի, սակայն պատվավոր կենացների ժամանակ հինգ և նույնիսկ տաս ռուբլի։ «Շաբաշի» ամենաեռուն պահը, դա հարսի և փեսայի պարն է։ Հարսին և փեսային պարի է հրավիրում քավորը, որը նախօրոք տաս ռուբլիանոց է շաբաշ գցում։ Բոլոր ներկա տղամարդիկ «շաբաշը» դնում են հարսի ձեռքը, որը պարի վերջում այն լցնում է նվագածուների առաջ։ Այդ պարը դադարեցնելու իրավունք ունի միայն քավորը։

Մեծ հարգանքով է խմվում, սովորաբար, Թամադայի կենացը. նրա պատվին անընդմեջ երգ կամ պար են պատվիրում։ Սակայն այս հարգանքը տրրվում է այն դեպքում, երբ, իրոք, Թամադան լավ է կառավարել տոնախմբությունը։ Հակառակ դեպքում պատահում են շատ սուր դիտողություններ, որոնք երբեմն հասնում են անախորժությունների։

Ուրախությունը ավարտվում է առավոտյան բակ դուրս գալով, որտեղ

---

4 Հնում այդ նույն նպատակով, բայց ամենայն լրջությամբ ցուցադրվել են «Թագվորի» շորթերը, որոնք աճուրդի գրվելով, սովորաբար գնվելիս են եղել երիտասարդների ղեկավարի՝ «աղապ—բաշու» կողմից։ Ցուցադրարար են հանձնվել նաև հարսի զգեստները, նվերները, սաչուն (կանչ) և այլն։

հյուրերը մի որոշ ժամանակ պարում են, ուրախանում, իսկ հետո ցրվում են տները հանգստանալու։

Մի քանի ժամ հետո, հարսի տանը սեղանը թարմացվում է, հավաքվում են այս անգամ արդեն մեծ մասամբ երիտասարդները՝ փեսան իր ընկերներով, հարսի ընկերուհիները, երիտասարդ բարեկամները, հարազատները և այլն։ Երիտասարդության տոնախմբությունը ընթանում է անկաշկանդ, անբռնազբոսիկ, առանց որևէ ծեսի և ձևականության։

Այս բոլորից հետո սկսվում են շնորհավորական այցելությունները՝ «աչքալուսանքը»։ Այցելուները դիտում են նաև պատրաստի կամ նախապատրաստվող օժիտը, ընդ որում, դիտելուց հետո, մի որևէ բան են ավելացնում իրենց կողմից։ Շնորհավորելու է շտապում նաև դերձակուհիներից որևէ մեկը, որը սովորական շնորհավորական խոսքերից հետո, խնդրում է հայտնել քավորին, որ աղջկա հարսանեկան զգեստը իրեն կարել տան։ Այդպիսի շահագրգռվածությունը բացատրվում է նրանով, որ հարսանեկան շոր կարելը մի տեսակ ռեկլամ է լավ վճարող պատվիրատուներ ձեռք բերելու համար։

Նշանադրությունից հետո, փեսան, սովորաբար, սկզբում ընկերներով, իսկ հետո նաև մենակ սկսում է հաճախել հարսի տուն, որպիսի երևույթը առաջներում ընդունված չէր՝ կատարվում էր միայն գաղտագողի։ Հարսին անուշադիր չեն թողնում նաև փեսայի հարազատները։ Առաջին իսկ շաբաթվա մեջ նրանք այցելում են նրան՝ տանելով նվերներ (անուշահոտ օծանելիքներ, գու պաներ, սպիտակեղեն, քաղցրավենիք և այլն)։

Հարսանեկան ցիկլի վերը նկարագրած մասը ավելի շատ վերաբերում է աղջկա ընտանիքին, չնայած փեսայի հարազատներն էլ պակաս հոգսեր ու ծախսեր չեն ունենում, կապված նվերների, աչքալուսանքների և այցելությունների հետ։

Նշանադրությունից հետո սկսվում է հարսանիքի բուռն նախապատրաստությունը։ Միշտ չէ, որ լենինականցիները հարսանիք են կատարել, կամ բոլոր դեպքերում չէ, որ ամուսնությունը հարսանիքով է ուղեկցվել։

Հայտնի է, որ 1920—30-ական թվականներին, երբ Ալեքսանդրապոլում սովետական կարգերը հաղթանակելուց հետո մեծ թափ է ստանում ամենայն հնի դեմ պայքարելու շարժումը, ավելորդություն է համարվել հետևելու այդքան երկար ու տաղտկալի ծեսերին, և ամուսնացել են գրեթե լռելյա ն, առանց որևէ շուքի։ Իսկ դժվարին տարիներին պատահել են նաև լենինականցիների համար չափազանց արտառոց, տնփեսայության բաղմաթիվ դեպքեր։

Հարսանեկան տոնախմբությունները զգալիորեն նվազել են նաև Հայրենական պատերազմի ծանր տարիներին։ Սակայն կյանքի բարեբավմանը և նյութական բարեկեցության բարձրացմանը զուգընթաց, նորից ծայր են առնում տղայի ու աղջկա համատեղ կյանքի մուտքը և հասարակական պատասխանատվությունը խորհրդանշող հարսանեկան ցանկալի տոնախմբությունները, որոնք հիմնականում վերափոխվելով, դեռևս լիովին չեն ազատվել անցյալի սովորույթների որոշ հետամնացություններից։

Նշանադրությունից որոշ ժամանակ անց, հրավերքներից մեկի ժամանակ, որոշվում է հարսանիքի օրը[5]։ Դրանից հետո կարևոր մոմենտ է համարվում

---

5 Նախկինում հարսանիքի օրը որոշելու և ընդհանրապես հարսանիքի, պսակադրության առթիվ բանակցելու նպատակով, խնամիները հավաքվում էին, որը կոչվում էր քյսա-բիյառ։ Այժմ այդ ծեսը վերացել է։

քավորի նախապատրաստությունը։ Նա, սովորաբար, պատրաստում է հարսի ամբողջ հարսանեկան զգեստը[6], որը և հանդիսանում է նրա սինիի գլխավոր պարունակությունը։ Քավորն այժմ իր հին նշանակությունը չունի, մանավանդ, որ այն նշանակվում է հարսանիքի նախօրեին, Քավոր կարող է լինել ով ցանկանա՝ մոտ բարեկամը, աղգականը, ընկերը, իսկ երբեմն նաև ընտանիքի խաչբավորը[7]։

Հարսանիքի օրը, նշված ժամին, ինչպես փեսայի, այնպես էլ հարսի տանը հավաքվում են հյուրերը՝ նվերներով։ Հյուրերի հավաքվելուց և տղայի տանը շնորհավորական կենացներ խմելուց հետո, քավորի, քավորկնոջ, փեսայի և նրա հարազատներից մի քանիսի գլխավորությամբ հյուրերի մի մասը մեքենայով մեկնում է հարսին բերելու («հարսնառ»)։ Մնացող հյուրերը ընթրում են և զբաղվում զանազան խաղերով՝ նարդի, շախմատ և այլն։ Նույն բանն է կատարվում նաև աղջկա տանը։

Մինչև հարսնևորների գալը, հարսի տունն է գալիս փեսայի կողմնակիցներից որևէ երիտասարդ ներկայացուցիչ, այսպես կոչված «աղվեսը» և ծաղկեփունջ տալով, հայտնում հարսնևորների գալու լուրը, որի համար նա նվեր է ստանում։ Հյուրերին դիմավորում են մուտքի մոտ, պարում են՝ այս անգամ արդեն «խաղացնելով» քավորի սինին։

Հյուրերը ներս են հրավիրվում, ցուցադրում են քավորի սինին և թամադան առաջարկում է քավորկնոջը և մյուս կանանց՝ գործի անցնելու։ Նրանք գնում են հարևան սենյակը, որտեղ և տեղի է ունենում հարսի զգեստավորման արարողությունը։

Երբ հարսն արդեն հագնված է, թամադայի խնդրանքով քավորը, փեսան և հարսնեղբայրը հարսին առաջ են բերում։ Քավորը «շարաշ» է տալիս երաժիշտներին, իսկ հարսին զգեստավորող կանայք վարձատրված են լինում սինիի մեջ գտնվող քաղցրավենիքը և խմիչքները ճաշակելով[8]։

Հարսն ու փեսան սեղանատուն են մտնում թևանցուկ, հարսի կողքին՝ հարսնեղբայրը, փեսայի կողքին՝ քավորը։ Երբեմն, շուքի համար, կողքերից տանում են նաև ոսկեզօծ կերոններ։

Սկսվում է ընդհանուր ուրախությունը և բավականաչափ կենացներ խմելուց հետո, հարսնևորները վեր են կենում գնալու։ Սովորաբար զոքանչը նվերներ է տալիս փեսային և քավորին, օրինակ՝ ժամացույց, ոսկեղեն իրեր և այլն։

Հարսի ու փեսայի հետ մեկնում են քավորը, նրա կինը, հարսնեղբայրը և երկու կողմի հարազատներն ու հյուրերի մի փոքր մասը։ Այդ խումբը մեքենայով մոտենում է փեսայի տանը, հարսն ու փեսան մոտենում են դռան շեմին, նրանց ոտքերի տակ դրվում է մեկական ափսե, որոնք կոտրելուց հետո, մտնում

---

6 Հնի համեմատությամբ զգեստը այժմ լիովին փոխվել է, այն առավելապես եվրոպական է. տղաներինը՝ սպիտակ վերնաշապիկ, սև փողկապ և սև կոստյում. աղջիկներինը՝ նորաձև սպիտակ հարսանեկան զգեստ՝ լավագույն գործվածքից։ Հնից մնացել են աղայի կրծքի մոմե սպիտակ ծաղիկները և երբեմն աղջկա ուղղակի բաց գլխին գրվող թագն ու ուսերին դցվող ֆաթան։ Առհասարակ թե հարսի և թե փեսայի զգեստները, անցյալի համեմատությամբ, պարզեցված են։

7 Գյումրեցիների մեջ հարսանիքի քավոր առաջ դառնում էր անպայման խաչբավորը, որպիսին արհեստավորների մեջ մեծ մասամբ լինում էին վարպետները։ Խաչբավորությունը անցնում էր սերնդե-սերունդ։

8 Հարսի զգեստավորումը ձեռականություններից գրեթե ազատ է, նախկինից այստեղ պահպանվել են միայն «շեն մնա» բացականչությունն ու երգերը։

են տուն[9]։ Եթե հարսանիքը այստեղ է լինում, ապա այն սկսվում է, իսկ եթե մի ավելի ընդարձակ սրահում, օրինակ՝ ակումբի դահլիճում, դպրոցի շենքում, որը երբեմն կիրառվում է, ապա մի քանի շնորհավորական բաժակներ խմելուց հետո, ամբողջ թափորը պարելով ուղևորվում է տոնահանդեսին հատկացված շենքը։

Լենինականցիների մոտ ընդունված չէր աղջկա մորը հարսանիք տանելը։ Սակայն հետզհետե սովորություն է դառնում հոր հետ միասին հատուկ շուքով հանդեսի վայրը նաև մորը տանելը։ Ուրախությունը այնուհետև շարունակվում է նույն կարգով, ինչպես նշանադրության ժամանակ, միայն այն տարբերությամբ, որ ա ստեղ հյուրերն ավելի շատ են և սեղանն էլ ավելի մեծ։ Ուրախության ամենաբարձր պահը նորից հարսի և փեսայի պարն է և հարսանիքը նորից սահմանափակվում է թամադայի և սեղան պատրաստողների կենացով։

Հաջորդ երեկոյան, երիտասարդների ղեկավար «ազապրաշին», որը նախկինում հարսի տնից ուտելիքների և խմիչքի բաժին է ստանալիս եղել ու առանձին քեֆ է արե· երիտասարդների հետ, այժմ նույնպես մի փոքրիկ ձևական բաժին է ստանում հարսի տնից, որը կապված է լինում հատուկ թաշկինակի մեջ և կոչվում է «ազապրաշու մարմա»։ Նա իր, կամ այժմ մեծ մասամբ փեսայի տուն է հրավիրում երիտասարդներին, մերձավոր բարեկամներին ու ինչպես նշանդրեքից հետո աղջկա տանը, այստեղ նույնպես տեղի է ունենում առանց ծիսակատարությունների անկաշկանդ ուրախություն, եթե չհաշվենք միայն ձևականորեն կատարվող և կատակի վերածված «ազապրաշու մարմի» բացման արարողությունը։

Հարսանիքն, այսպիսով, վերջանում է։

Ցիկլի շարունակություն պետք է համարել հարսի օժիտի հանձնումը։ Հայաստանի այլ քաղաքների համեմատությամբ, աղջկա համար անպայմանորեն լիարժեք օժիտ ուղարկելու սովորությունը ավելի շատ պահպանվել է լենինականցիների մեջ։ Սխալ կլիներ պնդել, թե օժիտը նախկինի նման պահպանվում է իր զուտ տնտեսական նշանակությամբ։ Իհարկե, դեռ լիովին չի կարելի բացառել նաև այդ հանգամանքը, սակայն մեր պրպտումները ցույց տվեցին, որ մեծ մասամբ օժիտը չի հետաքրքրում ստացող կողմին, մանավանդ, եթե ամուսնությունը փոխադարձ սիրով և համաձայնությամբ է կատարվում։ Բարեկեցիկ կյանքն ու կենսական մակարդակը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր ծնողի ամուր հիմքերի վրա դնելու, ամուսնական կյանքի առաջին դրերի դժվարություններից զերծ պահելու նորապսակներին։ Սակայն որդիների նկատմամբ ցանկալի պարտքը կատարելով և «հասարակական կարծիքի» առաջ պարզերես դուրս գալու նպատակով, լենինականցի պատվախնդիր ծնողները հաճախ տուրք են տալիս հին տրադիցիաներին և ընդօրինակելով մեկը մյուսին, ընկնում են չափազանցությունների մեջ։ Ստիպված են լինում օժիտ պատրաստել դստեր փոքր հասակից մինչև նրա ամուսնացնելը և երբեմն դրանից հետո էլ երկար ժամանակ պարտքի տակ են մնում։

---

9 Նախկինում, զանազան նախապաշարմունքների հետևանքով, զույգերին եկեղեցուց դուրս բերելիս և տղայի տան շեմքից ներս մտնելուց առաջ կատարվում էին բազմապիսի ծեսեր՝ եկեղեցուց առաջինը դուրս գալ, ոտքերի տակ գառ պառկեցնել, մատաղարու մորթել, ոտքերի տակ ափսեներ կոտրել, ուսերին լավաշ հաց գցել, քավորը սուր (թուր) էր բռնում դռան շեմքի վերևը, ներս մտնելով զույգերը երեք պտույտ էին գործում սեղանի շուրջը և այլն։

Սխալ պետք է համարել լենինականցիների որոշ մասի այն կարծիքը, որ «առանց օժիտ աղջիկ չեն ամուսնացնի», մանավանդ, որ օժիտը դրեթե չի հետաքրքրում տղայի ծնողներին, որովհետև նորապսակների գերակշռող մասը ապրում է առանձին, իր աշխատանքով և որևէ շահի հարց չի կարող լինել, իսկ նորապսակներն էլ երբեմն ստիպված գերի են դառնում տարիների ընթացքում հավաքված ու զգալի մասով նորաձևությունը կորցրած թանկարժեք նվերներին։ Մեծերին և ծնողներին հարգելու համար նրանք զրկում են իրենց ավելի ժամանակակից և ճաշակով կահավորելու և հագնվելու սեփական հնարավորություններից։ Այնուամենայնիվ, ժամանակը իրենը թելադրում է և հետզհետե հաղթանակում է նորը նաև կենցաղում։

Չնայած սակավ, բայց կան նաև անօժիտ, առանց ձևականությունների և առանց հարսանիքի ամուսնություններ, որոնք հետևանք են ոչ թե տնտեսական անկար վիճակի, այլ ամուսնությունն ավելի խելամիտ սկսելու, միջոցներն ու ժամանակը ավելի նպատակահարմար օգտագործելու ողջամտության։ Տեղ են գտել նաև կոմերիտական հարսանիքները, որոնք գնալով ավելանում են։

Սովորաբար օժիտը ուղարկվում է մինչև հարսանիքը, կամ նրանից հետո։ Մեծ մասամբ հարսանիքից հետո, աղջկա տանը փոքրիկ սեղան է դցվում, ավտոմեքենա են կանչում, օժիտը, որ շնորհավորական ացելությունների ժամանակ արդեն շատերին է ցուցադրվել, դուրս են բերում այն ժամանակ, երբ բավականաչափ մարդ արդեն շրջապատել է մեքենան։ Իրերը հանում են մեկ-մեկ և այս ու այն կողմ շրջելով, տեսանելի կերպով դասավորում մեքենայի մեջ։ Օժիտը փեսայի տունն են տանում հարսի բարեկամներից մի երկու հոգի, որոնք լավ գիտեն դրա բովանդակությունը։ Փեսայի տանը նախօրոք հավաքվում են նրա բարեկամներից մի քանիսն ու հարազատները։ Օժիտը, սովորաբար, ընդունում է տղայի մայրը և ցուցադրում բարեկամներին։ Օժիտ բերողները պարգևատրվում են նվերներով։

Անհրաժեշտ է նշել, որ լենինականցիների մեջ վարակիչ սովորութ դարձած ու ցուցադրաբար կատարվող «շաբաշի» շռայլումը, չափազանցված օժիտն ու քաղբենիական «հասարակական կարծիք» ստեղծելու համար կատարվող այլ ցուցամոլական երևույթները միայն կաշկանդում, բռնազբոսիկ են դարձնում իրոք գեղեցիկ ավանդույթներ պարունակող հարսանեկան տոնախմբությունները։ Շատ հաճախ միմյանցից ընդօրինակելով, դրանց տուրք են տալիս նաև մտավորականության ներկայացուցիչները, ներքուստ ըմբոստանալով, բայց ակամա այդ սովորույթներին են կուլ գնում նաև բազմաթիվ հին և նոր, ծերունի և երիտասարդ լենինականցիներ։

Հարսանեկան ցիկլի հետևյալ և վերջին ծեսը դա հարսանիքից հետո առաջին շաբաթվա մեջ կատարվող հրավերքն է, որն առաջներում կոչվել է գլուխ լվանեք։ Աղջկա մոր հետ մեկտեղ տղայի տուն են հրավիրվում նաև այլ հյուրեր։ Այդ հանդիպման հիմնական միտքը աղջկա և նրա հարազատների հանդիպումն է։ Հարազատները և հատկապես մայրը հարսանիքից մինչ ա դ օրը պետք է որ հանդիպած չլինեն աղջկան, մի բան, որն այժմ գրեթե չի պահպանվում։

Այսպիսով, լենինականցիների ժամանակակից հարսանիքը ամուսնական տոնախմբություն է, նոր կյանքի սկիզբը ավետող ուրախության հանդես։ Ամուսնության հիմքում գերազանցապես ընկած է ամուսնացողների փոխադարձ սերը։ Նրանք են որոշում իրենց ապագան, ու ընդհանուր ուրախությունը կատարվում

է նրանց ցանկությամբ։ Սակայն շրջապատված փնելով ծնողներով, հարազատներով ու տարեց բարեկամներով, երիտասարդները չեն կարող չհարգել նաև նրանց ցանկությունները, իսկ վերջինները որպես ավանդական սովորույթների կրողներ, արդի պայմաններում նախանձախնդիր են ոչ այնքան դրա՝ց բովանդակությանը, որքան ձևական-արարողական կողմին։ Սակայն, երբեմն, տուրք տալով քաղքենիական «հասարակական կարծիքին», իրոք գեղեցիկ ավանդույթների կողքին, երբեմն վերապրուկի ձևով, ի հայտ են գալիս նաև հետադիմական իմաստ ունեցող ծեսեր, որոնք բուռն պայքարի մեջ գտնվելով նոր ավանդույթների հետ, աստիճանաբար իրենց տեղը զիջում են նորին և այս ընթացքում էլ մշակվում են հարսանեկան ժամանակակից ազգային սովորությունները, որոնց հիմնական նշանակությունը կայանում է նրանում, որ զգալիորեն զարդարեն ու գեղեցկացնեն մի այնպիսի իրադարձության նշանավորումը, ինչպիսին երիտասարդ տղայի ու աղջկա ամուսնությունն է՝ համատեղ կյանքի սկիզբը։